ՏԻՐԱՆ ՔԵԼԵՔՅԱՆԸ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ

«Իթթիհաթ վե Թերաքքիի» (Միություն և առաջադիմություն) կուսակցության կառավարման շրջանում կային բազմաթիվ հայեր, որոնք անդամակցում էին երիտթուրքական կազմակերպությանը կամ մտերիմ կապեր ունեին իթթիհաթական ղեկավարների հետ, և զգալի դեր էին խաղում Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում: Այդպիսիք էին Պետրոս Հալաչյանը, Գաբրիել Նորատունկյանը, Հակոբ Բաբիկյանը, Գրիգոր Զոհրապը: Նրանից մեկն էր և լրագրող, «Սաբահ» օրաթերթի գլխավոր հոդվածագիր Տիրան Քելեքյանը:

Հետաքրքիր մի հանգամանք. լինելով հայրենասեր, նախկինում Ս. Դ. Հնչակյան կուսակցության անդամ, նա միաժամանակ հանդիսանում էր օսմանիզմի կողմնակից, թուրք ազգայնական: Իրոք՝ իր աշխատություններով նա որոշակի ներդրում է ունեցել թուրք ազգայնականության զարգացման գործում: Թուրք պատմաբան պրոֆ. Զաֆեր Թոփրաքը բնութագրում է Քելեքյանին որպես «...օսմանականության, սահմանադրության կողմնակից: Ժամանակակից գաղափարները պաշտպանող երիտթուրք»:[1]

Ներկա հոդվածում կփորձենք անդրադառնալ Տիրան Քելեքյանի դավանվող գաղափարներին, որոնք ծառայեցին թուրք ազգայնականության հիմնավորմանը և նրա հարաբերություններին երիտթուրքական կազմակերպության ղեկավարների՝ հատկապես 1915թ. Հայոց ցեղասպանության երկու ճարտարապետներից մեկի՝ Բեհաեդդին Շաքիրի հետ, նաև՝ որոշ մանրամասներ ներկայացնել Տիրան Քելեքյանի նահատակության մասին:

Տիրան Քելեքյանը ծնվել է 1862թ. Կայսերիում, սակայն փոքր հասակում ընտանիքի հետ միասին տեղափոխվել է Ստամբուլ, ուսում ստացել Հասքյոյի (նախակրթարան), Քումգափլի (միջնակարգ) և Գեղիքփաշայի (լիսեյ) հայկական դպրոցներում: Բարձրագույն կրթությունը ստացել է Ֆրանսիայում, ավարտելով Մարսելի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Վերադառնալով դասավանդել է Քաղծառայողների դպրոցում (Mekteb-i Mülkiye), ինչպես նաև աշխատել է լրագրող, զբաղվել փաստաբանությամբ: Այդ շրջանում որպես

լրագրող և գլխավոր հոդվածագիր աշխատել է հայատառ թուրքերեն Manzume-i Efkar, ինչպես նաև Saadet, Tarik, Sabah և Ceride-i Şarkiyye թերթերում: Հայերեն հոդվածները ստորագրում էր Տ. Ք. (անվան և ազգանվան առաջին տառերով), իսկ թուրքերեն հոդվածները՝ «Բեդրի Քյամիլ» և «Ի. Նադիր» կեղծանուններով: Այդ շրջանում եղել է նաև Իզմիրլյան Պատրիարքի թարգմանիչ-քարտուղարը և զբաղվել քաղաքական գործունեությամբ, անդամակցելով Հնչակյան կուսակցությանը:[2] Իր հոդվածներում նա ակտիվորեն անդրադառնում էր 1895թ. «Մայիսյան բարեփոխումներին» առնչվող հարցերին, հայոց ազգային-ազատագրական շարժման խնդիրներին, ինչի արդյունքում 1904թ. ստիպված է լինում լքել Թուրքիան և տեղափոխվել Լոնդոն, ուր շարունակում է տպագրվել անգլիական թերթերում:

Տեղափոխվելով Փարիզ նա սերտ կապեր է հաստատում արտասահմանում գտնվող երիտթուրքերի, հատկապես՝ Ահմեդ Ռիզայի և նրա կողմնակիցների հետ: Երիտթուրքական կազմակերպության հետ կապերի հաստատմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ Քելեքյանը մեկնել էր Փարիզ Ահմեդ Ջելալեդդին փաշայի հետ, որի քարտուղարն էր հանդիսանում: Այդ շրջանում Ահմեդ Ջելալեդդին փաշան մեծ նյութական օգնություն էր ցուցաբերում արտասահմանում գտնվող երիտթուրքական կազմակերպություններին, և այդ ամբողջ օգնությունը տրամադրվում էր Տիրան Քելեքյանի միջոցով:[3] Անշուշտ երիտթուրքերի գաղափարներն ազդեցություն են թողել Քելեքյանի վրա, սակայն հայ պատմագրության մեջ նշվում է, որ նա մինչև վերջ շարունակել է հավատարիմ մնալ Ս. Դ. Հնչակյան կուսակցության դավանած սկզբունքներին և Հայ դատին: Այսպես՝ Թեոդիկը նշում է. «...թէպէտ, թուրք թերթի մէջ գրելու ստիպուած, հնարը կը գտնէր, սակայն, Ազգային Դատին դէմ բան չգրելու, բուն թուրք գրչակներու թողլով այդ հոգը»:[4] Թուրք պատմաբանները նշում են, որ առնվազն մինչև 1908թ. Քելեքյանը հանդիսացել է երիտթուրքական կազմակերպության անդամ, անդամակցելով այդ կազմակերպության արտաքին՝ Փարիզի մասնաճյուղին:[5]

1905թ. Փարիզ է փախչում նաև դ-ր Բեհաեդդին Շաքիրը: Փարիզ հասնելու պես, նա առաջին նամակը գրում է Տիրան Քելեքյանին: 1905թ. հոկտեմբերի 26-ի պատասխան նամակում Քելեքյանը, ողջունելով Շաքիրի ժամանումը Փարիզ և շնորհակալություն հայտնելով ուղարկված նամակի համար, նշում է. «Ձեր արկածների, ապրած պատահարների մասին կարդալիս մեկ անգամ ևս հիացա ձեր արիությամբ... Ձեզ հետ միասին հաղթանակի համար պայքարելը մեզ համար էլ մեծ պատիվ է: ...Սրանից առաջ ծախսերի համար Ձեզ փոստով 1000 ֆրանկ եմ ուղարկել: Ձեր անունը միայն որպես դ-ր Բեհաեդդին մի օգտագործեք, Ստամբուլում եղած ժամանակվա պես դ-ր Բեհաեդդին Շաքիր որպես օգտագործեք ավելի հարմար կլինի: Մեկ էլ՝ Ձեր նամակները միշտ պատվերով ուղարկեք: Որովհետև Յըլդըզի արմատները տարածվել են մինչև փարիզները, կահիրեները: Ուրիշի նամակը գողանալը, կեղծ ստորագրությունով ուրիշի նամակը ստանալն իրավական գործերի պես են անում: Ձերդ գերազանցությունը Եվրոպայում «մեր դեսպանը» կլինեք: Ե՛վ բժիշկությունը կշարունակեք, և՛ քաղաքականությանը կմասնակցեք: Արվելիք շատ գործ կա: Փարիզում լուրջ

դեսպանի մեծ կարիք կա.. Եվրոպայում Ձեզ հանդիպած մարդիկ մեծամասամբ ինտրիգներով են ապրում: Նման շարլատանների նկատմամբ հնարավորին չափ զգուշ պետք է լինեք»:[6]

Այն, որ Քելեքյանի միջոցով ուղարկվելիք նյութական օգնությունը մեծ դեր էր խաղում և երկարատև բնույթ ուներ, երևում է Բեհաեդդին Շաքիրի նամակագրությունից: Վերընշված 1000 ֆրանկի ստանալու մասին Շաքիրը գրում է ընկերոջն ուղարկված նամակում. «Այս անգամ Քելեքյան էֆենդիի միջոցով ուղարկված 1000 ֆրանկը ինձ փրկեց անխուսափելի ծայր աղքատությունից»:[7] Մեկ այլ նամակում նա նշում է, որ Տիրան Քելեքյանից ստացված հրահանգների համաձայն 300-ական ֆրանկ է բաժանել կազմակերպության երկու անդամներին՝ Թեվֆիկ և Իսմայիլ անուններով:[8]

Քելեքյանը ձեռնամուխ եղավ նաև Բեհաեդդին Շաքիրին ներկայացնելու Փարիզի երիտթուրքական կազմակերպության անդամներին: Իր հուշերում Փարիզի երիտթուրքական կենտրոնի ղեկավար Ահմեդ Ռիզան նշում է, որ սկզբնական շրջանում Բեհաեդդին Շաքիրն իրեն մեկուսի էր պահում, «կարծում էր, թե միայնակ կարող է գործել», և իր հետ Շաքիրին ծանոթացրել է Տիրան Քելեքյանը:[9]

Բեհաեդդին Շաքիրի կենսագրիր Հիքմեթ Չիչեքը, նշելով, որ Փարիզի և Կահիրեյի երիտթուրքական կենտրոնների միջև գաղափարական տարաձայնություններ գոյություն ունեին, Շաքիրին երիտթուրքական կենտրոնի աշխատանքներին ներգրավելուն ուղղված Քելեքյանի ջանքերը բացատրում է Բեհաեդդին Շաքիրին իրենց կողմ ներգրավվելու ցանկությամբ:[10]

Հարկ է, այնուամենայնիվ, նշել, որ Բեհաեդդին Շաքիրի ակտիվացումը երիտթուրքական կազմակերպության շարքերում, նրա գաղափարները ձևավորվել են ոչ թե Տիրան Քելեքյանի, այլ դ-ր Նազըմի ազդեցությամբ: Աղբյուրները պնդում են, որ հենց դ-ր Նազըմն է հանդիսացել Շաքիրի «գաղափարական հայրը», և Բեհաեդդին Շաքիրը զգալի չափով Նազըմին էր պարտական հետագայում Իթթիհաթում եղած իր դիրքով և ազդեցությամբ: Դ-ր Նազըմի և Բեհաեդդին Շաքիրի հետ Փարիզում ապրած հայտնի թուրք գրող Յահյա Քեմալն անձամբ ականատես էր դրան: Նա նշում է. «Աչքովս եմ տեսել, թե ինչպես մի մարդ կարող է վերափոխել մյուսին: Բեհաեդդին Շաքիրը նրբանկատ, կնամոլ, խաղամոլ, իր ցանկություններով ապրող մի մարդ էր: Նազըմը ճանաչեց այս մարդուն, նրան իր մտքերը ներարկեց, իր բնավորությանը խառնեց, ինչի արդյունքում ստացվեց հայտնի Բեհաեդդին Շաքիրը.... Թե ինչպես դոկտոր Նազըմը փոխեց այս մարդուն, ինչպես հրաշալի կոմիտեական սարքեց, այլ հուշերումս բացատրելու համար այստեղ չեմ կրկնի: Միայն նշեմ, որ. եթե դոկտոր Բեհաեդդին Շաքիրը չճանաչեր դոկտոր Նազըմին, չէր լինի այն, ինչ հիմա է, արած գործերը չէր անի, ունեցած վախճանը չէր ունենա, կապրեր որպես քչերին ծանոթ մի բժիշկ»:[11] Ուշագրավ է, որ այն ժամանակ, երբ Բեհաեդդին Շաքիրը նոր էր ժամանել Փարիզ և Տիրան Քելեքյանը ծանոթացնում էր նրան Ահմեդ Ռիզայի, նույն՝ դոկտոր Նազըմի հետ, վերջինս խուսափում էր մտերիմ կապեր հաստատել Շաքիրի հետ, կարծելով, որ նա հանդիսանում է Ահմեդ Ջելալեդդին փաշայի լրտեսը:[12]

1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Տիրան Քելեքյանը վերադարձավ Ստամբուլ և սկսեց թղթակցել «Սաբահ» օրաթերթին: Միաժամանակ Քաղծառայողների դպրոցում վարում էր քաղաքական պատմության դասեր: Քելեքյանը նաև դիվանագիտության պատմություն էր դասավանդում:

Այդ շրջանում նա ֆրանսերենից թուրքերեն մի շարք ստեղծագործություններ է թարգմանել, հեղինակել է ֆրանսերեն-թուրքերեն բառարանը, գրել, բայց չի հասցրել հրատարակել նոր օսմաներենի բառարանը (Kamus-i Cedid-i Osmani):

Քելեքյանը հրատարակել է նաև «Քաղաքական պատմություն» երկհատորյակը (Tarih-i Siyasi-i Umumi): Այս և իր մյուս աշխատություններում Քելեքյանը խոր վերլուծության է ենթարկել Ֆրանսիական մեծ հեղափոխության շրջանը, և այդ շրջանի քաղաքական միտքը:[13] Այս աշխատություններով Քելեքյանը փաստորեն նպաստել է թուրք ազգայնական գաղափարախոսության զարգացմանը, քանի որ, ինչպես նկատում է Զաֆեր Թուփրաքը. «... օսմանյան տարածքում եղած բոլոր ազգայնական գաղափարների, ներառյալ թուրք ազգայնականության, սկզբնաղբյուր էր հանդիսանում Ֆրանսիական հեղափոխությունը»:[14] Նա նաև բերում է Տիրան Քելեքյանի մասին Քաղաքացիական ծառայողների դպրոցի (Mülkiye) (որտեղ Քելեքյանը քաղաքական պատմություն էր դասավանդում) շրջանավարտ Ավնի Դողանի հուշերը Քելեքյանի մասին:

«Տիրան էֆենդին Հայ հնչակյան կուսակցության անդամ, և հայ անկախության դատը դավանող մի անձնավորություն էր: Չնայած դրան, դասավանդելիս մեզ թուրքիզմ էր քարոզում, հաճախակի մեզ համոզում էր և ցանկանում էր, որ անցյալից դաս քաղենք և ազնվաբար ծառայենք մեր ազգին: Դա, ինչպես և բոլոր ընկերներիս, ինձ էլ էր զարմացնում:

Մի օր, դասից հետո այցելելով նրան հարցրի. «Դուք ինքներդ Հայաստանի անկախության համար պայքարելով ի՞նչ շահ ունեք մեզ ցույց տալ մեր երկրին սպառնող վտանգները և խրախուսել մեզ ծառայել հայրենիքին»: Տիրան էֆենդին երկար մտածեց, ձեռքերով շոյելով, մի ասորեցի տերտերի մորուսի նման, չորս անկյուն ունեցող մորուսը: «Ով գիտե..., - պատասխանեց, - մի գուցե, հնարավոր է խղճումս հետք են թողել այս հողերը, որտեղ ես մեծացել եմ, իմ թուրք ընկերները»:[15]

Քելեքյանը լայն ծանոթություններ ուներ թե՛ իթթիհաթականների, թե՛ նրանց հակառակորդ իթիլաֆականների շրջանում: Նրա ծառայությունները թուրք քաղաքական մտքի զարգացման ասպարեզում, այդ թվում նաև ազգայնական գաղափարախոսության ձևավորման հարցում, ակնհայտ էին, և այդ իսկ պատճառով շատերի համար անհասկանալի անակնկալ էր 1915թ. ապրիլի 24-ին Քելեքյանի ձերբակալությունը հայ մտավորականների հետ միասին: Իր հետ միասին աքսորում գտնվող Թեոդիկը նշում է. «Նրանք, ովքեր գրում էին միայն հայկական թերթերի մեջ, կզարմանային իրենց հետ նույն խստության ենթակա տեսնելով մի գրողի, որը միշտ անուն է շահած թուրք մամուլի մեջ և թե՛ գրչով, թե՛ դասախոսություններով օսմ. համալսարանի և սպայակույտի վարժարանի մեջ կկրթի թուրք նոր սերունդին և ուսուցիչներին: Սերտ հարաբերություններ ուներ Իթթիլաֆի հետ, սա-

կայն վստահելի էր թե Իթթիհաթի հերոս Մահմութ Շևքեթ փաշայի և թե Իթթիհաթի հակառակորդ եպարքոս Քյամիլ փաշայի համար, նաև գահաժառանգ Յուսուֆ Իզզեթին էֆենդիի, որ չէր համակրած Թալյաթ-Էնվեր խմբակին, որի զոհն էլ հետագայում դարձավ»:[16]

Թեոդիկի խոսքերը հաստատում են նաև իրենց հուշերում մի շարք աչքի ընկնող երիտթուրքեր: Այսպես, դատելով 1913թ. սպանված Թուրքիայի մեծ վեզիր, «Իթթիհաթի հերոս» Մահմութ Շևքեթ փաշայի օրագրից նրա հանդիպումները Տ. Քելեքյանի հետ պարբերաբար կրկնվում էին, և Մահմութ Շևքեթ փաշան ոչ միայն վստահում էր Քելեքյանին, այլև՝ մամուլի համար կարևոր հայտարարություններն անում էր Քելեքյանի միջոցով և խորհրդակցում վերջինիս հետ քաղաքական հարցերի շուրջ:[17] 1913թ. Արևմտյան Հայաստանում իրականացվելիք բարեփոխումների ծրագրի քննարկման վերաբերյալ Մահմութ Շևքեթ փաշան նշում է. «Եկավ Տիրան Քելեքյանը: Ասեց, որ Թուրքիայում բնակվող երկու միլիոն հայերը ոչ անկախություն, ոչ էլ ինքնավարություն են ուզում, նրանց միակ ցանկությունը բարեփոխումների իրականացումն է և այդ կարծիքին է նաև հայ առաջնորդ Նուբար փաշան: Ես պատասխանեցի, որ հայերը ձգտում են ապահովել օտարների միջամտությունը և անկեղծ չեն»:[18]

Էսքիշեհիրում հանդիպելով այն գնացքը, որով աքսորի վայր էին տեղափոխում 1915թ. ապրիլի 24-ին ձերբակալված հայ մտավորականներին թուրք գրող Ահմեթ Ռեֆիկն իր «Երկու կոմիտե, երկու ոճիր» գրքում գրում է. «Մի երեկո լեփ-լեցուն մի գնացք եկավ: Կայարանից նայեցի ու տեսա, որ բոլորն ինձ ծանոթ մարդիկ են՝ Տիրան Քելեքյան, Բյուզանդ Քեչեյան, Թորքումյան... Մտավորական, հայրենասեր ինչքան հայ կար, բոլորին քարավան-քարավան քշեցին»:[19]

Թեոդիկի վկայությամբ, Չանքըրում աքսորի ժամանակ Քելեքյանը կտրուկ փոխում է իր դիրքորոշումը թուրքերի նկատմամբ, ժխտելով իրենց դրության հեշտացմանն ուղված ամենափոքր դիմումը թուրքական իշխանություններին, ընկերներին կոչ անելով «թուրքերի դեմ չնվաստանալ, և չխաբվել նրանց ժպիտներին»:[20] Թեոդիկը նշում է, որ ստանալով Քելեքյանին Սվազի ռազմական դատարան ուղարկելու հրահանգը, որը նշանակում էր փաստացի մահապատիժ, իր ընկեր թուրքերը Քելեքյանին առաջարկել են փախչել և արդեն համաձայնություն են ձեռք բերել այդ շրջանի չերքեզ-քայմաքամի և ոստիկանապետի հետ, սակայն Քելեքյանը մերժել է այդ առաջարկը, պատասխանելով. «Ես կարող եմ ինքս ինձ պաշտպանել Սվազի պատերազմական ատյանի առջև»:[21]

Քելեքյանին փախցնելու դեպքը մանրամասն նկարագրել էր այդ գործողության մասնակից Ահմեդ Քաղրին, «Ալեմդար» թերթի 1918թ. դեկտեմբերի 20-ի համարում: Քաղրին նշում է, որ իր Չորումում գտնվելու ժամանակ տեղեկություն է ստացել, որ Տիրան Քելեքյանին ժանդարմների վերահսկողության տակ բերել են այդ քաղաք և գործադրած ջանքերի շնորհիվ հանդիպել է նրա հետ: Ըստ Քաղրիի, Քելեքյանի ձերբակալման պատճառ հանդիսացել է այն, որ վերջինիս անունը նշվում է որպես ապագայում ստեղծվելիք անկախ Հայաստանի արտաքին գործերի նախարարի թեկնածու: Ահմեդ Քաղրին կազմակերպել էր Քելեքյանի փախուստը և նրա

ապաստանելը Չորումի մոտ գտնվող Քըրքդիլիմ չերքեզական գյուղում, սակայն Քելեքյանը մերժում է այդ առաջարկը, ասելով. «Ես տեղյակ չեմ այն բանից, ինչում ինձ մեղադրում են: Իմ նկատմամբ ինչ ուժեղ կասկածներ էլ լինեն, այս մարդիկ դատարանի ուշադրությանը պետք է ներկայացնեն այն մեղադրանքները, որոնց հիման վրա ես պետք է դատապարտվեմ: Ինքնուն տոկոսով համոզված եմ, որ փրկվելու եմ: Քանի որ տաս տոկոս հավանականության կա, թե ինձ անիրավական անմեղ տեղը կսպանեն, գտիր տղայիս և, կնոջս ներկայությամբ, նրան իմ կտակը հաղորդիր: Թող մարդասպաններից և Իթթիհաթ վե Թերաքքի անվանվող հրոսակախմբից վրեժս առնեն: Թե՛ մարդասպաններից, թե՛ Իթթիհաթ վե Թերաքքի անվանվող հրոսակախմբից իմ վրեժը, թուրք եղբայրներիս հետ միասին համագործակցելով, թող առնեն»:[22]

Թեոդիկի պնդմամբ այս բոլոր առաջարկների մերժման պատճառն այն էր, որ Քելեքյանն իր փրկության հույսերը կապել էր թագաժառանգ Յուսուֆ Իզզեթինի և Գերմանիայի դեսպան Վանգենհայմի հետ:[23]

Հարց է ծագում, ինչու՞ էր Տիրան Քելեքյանն իր հույսը կապել Յուսուֆ Իզեդդինի և Վանգենհայմի, այլ ոչ՝ Բեհաեդդին Շաքիրի հետ, որն, ըստ հայտնի երիտթուրք լրագրող Հուսեյն Ջահիթ Յալչընի, հանդիսանում էր 1915թ. Հայոց ցեղասպանության հիմնական ճարտարապետը և իրականացնողը:[24] Մանավանդ, որ թագաժառանգ Յուսուֆ Իզեթթինը, տարաձայնություններ ունենալով Էնվերի և Թալյաթի հետ, երիտթուրքական վերնախավում ընկերական հարաբերություններ ուներ միայն ԿԿ մեկ ազդեցիկ անդամի հետ, որը հարթում էր նրա և եռյակի երկու անդամների միջև եղած տարաձայնությունները: Դա Բեհաեդդին Շաքիրն էր: Ցեղասպանության ականատես Ահմեթ Ռեֆիկը զարմանում էր, թե ինչու՞ ոչ ոք «...ձայն չէր հանում այս ոչնչացման դեմ: Հալաչյան էֆենդին, դարձյալ կղզում, շքեղ պալատում իթթիհաթականների պատվին երեկո էր կազմակերպում, հայ պատգամավորները դարձյալ խորհրդարանում շարունակում էին քծնել թալյաթներին և նրանց օգնականներին»:[25] Պետրոս Հալաչյանը, Գաբրիել Նորատունկյանը, մի շարք հայ պատգամավորներ, օրինակ, Մուշի պատգամավոր Տեր-Կարապետյանը և այլոք, չտուժեցին 1915-16թթ. դեպքերի ժամանակ: Պետրոս Հալաչյանն ու Գաբրիել Նորատունկյանը հայտնի էին իրենց՝ իթթիհաթականների հետ եղած մտերմությամբ, սակայն Քելեքյանը նույնպես մտերիմ կապեր ուներ «Միություն և առաջադիմություն» կուսակցության պարագլուխների հետ: 1908-15թթ. կարելի է թվարկել մի քանի հայ մտավորականների, ովքեր լավ կապեր ունենալով երիտթուրքերի հետ և ազդեցություն ունենալով հայ բնակչության մեջ, միջնորդ էին հանդիսանում թուրք-հայկական բանակցություններում: Նշենք, որ բացի Հալաչյանից և Նորատունկյանից, որոնք 1913թ. ակտիվ դեր խաղացին Արևմտյան Հայաստանում բարեփոխումների ծրագրի քննարկման ժամանակ հայ քաղաքական կուսակցությունների և երիտթուրքերի (Թալյաթ, Նազիմ, Բեհաեդդին Շաքիր, Ջավիդ) հանդիպումների կազմակերպման հարցում, այդ գործում աչքի էին ընկնում Ակնունին, Վարդգես Սերենգուլյանը, Տիրան Քելեքյանը, որոշ չափով՝ Գրիգոր Զոհրապը: Նշենք նաև, և սա կարևոր իրողություն է, որ 1915թ. Թալյաթն առանձնահատուկ ջանքեր գործադրեց այս

վերջին չորս հայ մտավորականների ոչնչացման գործում, որոնք ձերբակալվել և տարբեր ռազմական դատարաններ են ուղարկվել անձամբ իր հրամանով:[26] Այս չորս մտավորականից ոչ-ոք «պատահաբար» ռազմական դատարաններ (Սվազ կամ Դիարբեքիր) չի հասել, ճանապարհին սպանվելով «Հատուկ կազմակերպության» ջոկատների կողմից: Ականատեսների հուշերը վերլուծելով (օրինակ, Ֆալիհ Ռըֆքի Աթայի կամ Ահմեթ Ռեֆիկի) տպավորություն է ստեղծվում, որ «Հատուկ կազմակերպության» հրոսակախմբերը հստակ հրաման ունեին թե ում պետք է սպանել, անջատելով նրանց աքսոր ուղարկված մյուս հայ մտավորականներից: Ուշագրավ է, որ, օրինակ, Վարդգես Սերենգուլյանի և Գրիգոր Զոհրապի հարցում, Թալյաթը մերժել է իր բոլոր մտերիմների խնդրանքները (ինչպես, օրինակ, արտգործնախարար Հալիլ Մենթեշեյի կամ ֆինանսների նախարար Ջավիդի, նույնիսկ՝ Ջեմալ փաշայի), և առանձնահատուկ ջանք է գործադրել Զոհրապի և Սերենգուլյանի դահիճներին Ջեմալ փաշայից փրկելու համար:[27]

Վերոնշյալ հայ մտավորականների մասին կարելի է նշել, որ նրանք, ի տարբերություն մյուսների, մինչև 1915թ. հնարավոր է գիտեին Իթթիհաթի ծրագիրները հայերի ոչնչացման վերաբերյալ, քանի որ նախազգուշացվել էին անձամբ այդ ծրագիրների հեղինակների կողմից: Այսպես, Թալյաթը 1914թ. անձամբ զգուշացնում է Վարդգես Սերենգուլյանին և խորհուրդ տալիս, վերցնելով ընտանիքը, հնարավորին չափ շուտ լքել Ստամբուլը:[28] Մի գուցե Սերենգուլյանը կամ Քելեքյանը ապացույցներ ունեին և կարող էին վկայել, որ իթթիհաթականների՝ հայերի ոչնչացման ծրագիրները շատ ավելի վաղ են մշակվել և որևէ կապ չունեն հայ քաղաքական կուսակցությունների և ռուսական զորքերի հետ համագործակցության պնդումների հետ: Այս դեպքում հասկանալի է Քելեքյանի պահվածքն աքսորի ժամանակ, որն անիմաստ էր համարում յուրաքանչյուր դիմումը թուրքերին, և կոչ անում իր ընկերներին իզուր տեղը «չնվաստանալ» նրանց առաջ:

Մեծ Եղեռնի վերաբերյալ հայ պատմագրության մեջ մանրամասն նկարագրված է Տիրան Քելեքյանի սպանությունը Սվազ գնալու ճանապարհին: Թուրք գիտնականները պնդում են, որ Տիրան Քելեքյանը չի զոհվել ցեղասպանության ժամանակ, այլ վերադարձել է Ստամբուլ, որտեղ և մահացել է: Նշվում է նրա մահվան տարբեր տարեթվեր: Այսպես, Զաֆեր Թոփրաքը նշում է 1918թ.[29], իսկ, օրինակ, հայտնի հայերի կենսագրական բառարան կազմող Հյուդավենդիգար Օնուրը՝ 1928թ.:[30] Հղում է կատարվում նաև 1915թ. մայիսի 8-ի՝ ներքին գործերի նախարար Թալյաթ փաշայի կողմից Քասթամոնուի վիլայեթ ուղարկված ծածկագիր հրամանին, համաձայն որի Չանքըրի աքսորված Տիրան Քելեքյանը կարող է բնակություն հաստատել կայսրության ցանկացած վիլայեթում, բացի Ստամբուլից:[31] Սակայն եթե, իրոք, Տիրան Քելեքյանն Առաջին համաշխարհային պատերազմից հետո իր մահով Ստամբուլում մահացած լիներ, ապա նա պետք է թաղվեր Շիշլիի հայկական գերեզմանոցում, ուր այդ ժամանակ թաղվում էին հայ մտավորականները: Ո՛չ Շիշլիում, ո՛չ էլ Ստամբուլի հայկական այլ գերեզմանոցներում Տիրան Քելեքյանի գերեզմանը չկա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս Zafer Toprak, Diran Kelekyan. Fransız Devrimi ve Mülkiye Mektebi, «Tarih ve Toplum», Temmuz 1989, cilt 12, sayı 67, s. 41.
[2] Թէոտիք. Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1922, էջ 33:
[3] Տե՛ս Hikmet Çiçek, Dr. Bahattin Şakir. İttihat ve Terakki'den Teşkilat-ı Mahsusa'ya Bir Türk Jakobeni, İstanbul, 2004, ss. 46-49.
[4] Տե՛ս Թէոտիք. Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1922, էջ 33:
[5] Տե՛ս Zafer Toprak, Diran Kelekyan. Fransız Devrimi ve Mülkiye Mektebi, «Tarih ve Toplum», Temmuz 1989, cilt 12, sayı 67, s. 39.
[6] Տե՛ս Milliyet, «Tarihi Tefrika», 24 Haziran 1934.
[7] Տե՛ս Ahmet Bedevi Kuran, İnkilap Tarihimiz ve Jön Türkler, İstanbul, 2000, s. 258.
[8] Նույն տեղում, էջ 261:
[9] Տե՛ս Meclis-i Mebusan ve Ayan Reisi Ahmed Riza Bey'in Anıları, İstanbul, 1988, s. 67.
[10] Տե՛ս Hikmet Çiçek, Dr. Bahattin Şakir. İttihat ve Terakki'den Teşkilat-ı Mahsusa'ya Bir Türk Jakobeni, İstanbul, 2004, s. 31.
[11] Տե՛ս Yahya Kemal. Siyasi ve Edebi Portreler, İstanbul, 1986, ss. 118, 122.
[12] Նույն տեղում, էջ 117:
[13] *Ուշագրավ է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ իր պայքարով հայտնի թուրք գիտնական Հալիլ Ինալչիկը նշում է, որ ֆրանսիական հեղափոխությանը նա ծանոթացել է Տիրան Քելեքյանի գրքով.* տե՛ս Cumhuriyet 26/11/2005:
[14] Տե՛ս Zafer Toprak, Diran Kelekyan. Fransız Devrimi ve Mülkiye Mektebi, «Tarih ve Toplum», Temmuz 1989, cilt 12, sayı 67, s. 41.
[15] Նույն տեղում, էջ 39:
[16] Տե՛ս Թէոտիք. Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1922, էջ 34:
[17] Տե՛ս Harbiye Nazırı. Sadrazam Mahmut Sevket Pasa'nin Gunlugu, Istanbul, 2001, ss. 27, 141, 246, 249.
[18] Նույն տեղում, էջ 249:
[19] Տե՛ս Ahmet Refik, Kafkas Yollarında. İki Komite, İki Kıtal, İstanbul, 1998, s. 177.
[20] Տե՛ս Թէոտիք. Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1922, էջ 36.
[21] Նույն տեղում, էջ 41:
[22] «Alemdar», 20 Kanunuevvel 1918.
[23] Տե՛ս Թէոտիք. Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1922, էջ 41.
[24] Տե՛ս Hüseyin Cahit Yalçın, Tanıdıklarım, İstanbul, 2001, s. 83.
[25] Տե՛ս Ahmet Refik, Kafkas Yollarında. İki Komite, İki Kıtal, İstanbul, 1998, s. 177.
[26] *Այսպես, Հալեպում Գրիգոր Զոհրապի և Վարդգես Մերենգուլյանի հետ մի քանի օր անցկացրած իթիլաֆական Ահմեդ Քաղրին նշում է, որ Զոհրապն ու Մերենգուլյանն ենթադրում էին, թե Թալյաթը, չնայած վալի Բեքիր Սամիի ու Ջեմալ փաշայի միջնորդություններին, չի համաձայնվի հայ մտավորականներին Հալեպում թողնելու և Հալեպի ռազմական դատարանի կողմից դատվելու առաջարկին, այլ կպնդի, որպեսզի նրանք Դիարբեքիր աքսորվեն, այսինքն՝ մահվան դատապարտվեն:* Տե՛ս Ahmed Kadri. Zohrab ve Vardkes Efendileri Diyarbakır Yolunda, «Alemdar», 22 Kanunusani 1919.
[27] Տե՛ս Ahmet Refik, Kafkas Yollarında. İki Komite, İki Kıtal, İstanbul, 1998, ss. 172-176.
[28] Տե՛ս Hüseyin Cahit Yalçın. Tanıdıklarım, İstanbul, 2001, ss. 49-50.
[29] Տե՛ս Zafer Toprak, Diran Kelekyan. Fransız Devrimi ve Mülkiye Mektebi, «Tarih ve Toplum», Temmuz 1989, cilt 12, sayı 67, s. 39.

[30] Sb'u Hüdavendiğar Onur. Ermeni Portreleri. Millet-i Sadıka'dan Hayk'ın Çoçuklarına – 2, İstanbul, 1999, s. 101.
[31] Sb'u Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920). Ankara, 1994, s. 27.

Резюме

Тиран Келекьян и османский национализм

Арсен Авакян

В статье исследуются некоторые аспекты жизни и деятельности известного журналиста и общественного деятеля младотурецкого периода Тирана Келекьяна, который, будучи членом С. Д Гнчакской партии, внес ощутимый вклад в развитии идеологии турецкого национализма. Т. Келекьян имел широкие связи с лидерами партии "Единение и Прогресс", в частности, он способствовал вовлечению в младотурецкое движение одного из влиятельнейших членов младотурецкой партии, организатора геноцида армян 1915г. д-ра Бехаеддина Шакира. По всей вероятности, Т. Келекьян обладал сведениями о разработке Иттихадом плана по уничтожению армян, поэтому по указанию министра внутренних дел Талаат паши Т. Келекьян выл убит по дороге в ссылку.

Summary

Tiran Kelekian and Ottoman Nationalism

Arsen Avagyan

The article addresses some aspects of Tiran Kelekian's life and activities as a famous journalist and public official during Young Turks period. While being a member of the Armenian "Hnchak" party, he contributed greatly to the development of the Turkish nationalism. T. Kelekian had lots of connections with the leaders of the "Union and Progress" Party, particularly he was the one who brought Dr. Bekhadina Shakir in the Young Turks movement, who later became the most influential person and was the organizer of the 1915 Armenian Genocide. It is possible that T. Kelekian was familiar with the Genocide Plan created by the "Union and Progress" Party. Likely, he has been killed on his way to exile by the order of Taliat Pasha, Minister of Interior.